ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՀՐԱՄԱՆ

«19» 06 2025 թ. Թիվ 156-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 118-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 21-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով.

Հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի 2021 թվականի սեպտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կառուցվածքը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների, այլ պաշտոն զբաղեցնող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց հաստիքացուցակը հաստատելու մասին» թիվ 118-Լ հրամանով (այսուհետ՝ հրաման) հաստատված աջակցող մասնագիտական կառուցվածքային

ստորաբաժանումների կառուցվածքում և հաստիքացուցակում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կոմիտեի արտաքին կապերի, արարողակարգի և կազմակերպչական հարցերի վարչությունից բաժանման եղանակով ստեղծել.

ա. Կոմիտեի արտաքին կապերի, կազմակերպական հարցերի և արարողակարգի վարչություն,

բ. Կոմիտեի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին.

2) դադարեցնել արտաքին կապերի, արարողակարգի և կազմակերպչական հարցերի վարչության գործունեությունը:

2. Կոմիտեի արխիվի բաժինը անվանափոխել Կոմիտեի տվյալների մշակման և արխիվի բաժնի:

3. Հրամանի N 1 հավելվածի 1-ին կետում.

1) 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ ենթակետ.

«4) արտաքին կապերի, կազմակերպական հարցերի և արարողակարգի վարչություն:»:

4. Հրամանի N 1 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) տվյալների մշակման և արխիվի բաժին.»:

5. Հրամանի N 1 հավելվածի 2-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին ենթակետով.

«3.1) տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին.»:

6. Հրամանի N 2 հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ. արտաքին կապերի, կազմակերպական հարցերի և արարողակարգի վարչություն

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	3
3.	ԸՆԴԱՄԵՆԸ	4

»:

7. Հրամանի N 2 հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) բաժիններ.

ա. առաջին բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	4
3.	ԸՆԴԱՄԵՆԸ	5

բ. տվյալների մշակման և արխիվի բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	6
3.	ԸՆԴԱՄԵՆԸ	7

գ. թարգմանությունների կազմակերպման բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	պետի տեղակալ	1
3.	մասնագետ	4
4.	ԸՆԴԱՄԵՆԸ	6

դ. տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	2
	Տեխնիկական սպասարկում	
3.	մասնագետ	1
4.	ԸՆԴԱՄԵՆԸ	4

ե. համակարգչային և տեխնիկական ապահովման բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	3
	Տեխնիկական սպասարկում	
3.	կապի մասնագետ	1
4.	ԸՆԴԱՄԵՆԸ	5

զ. նյութատեխնիկական ապահովման բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	6
	Տեխնիկական սպասարկում	
3.	գործավար-օպերատոր	1
4.	պատճենահանող	2
5.	էլեկտրագետ	1

6.	տեխնիկ	1
7.	բանվոր	1
8.	վարորդ	18
9.	հնոցապան	4
10.	պահեստապետ	1
11.	հավաքարար	9
12.	պարետ	1
13.	պահակ	1
14.	ԸՆԴԱՄԵՆԸ	47

է. փաստաթղթաշրջանառության ապահովման բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	14
3.	ԸՆԴԱՄԵՆԸ	15

ը. քաղաքացիների ընդունելության կազմակերպման և անցագրային բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	4
3.	ԸՆԴԱՄԵՆԸ	5

թ. տնտեսական հանցագործությունների և մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության աջակցող բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	2
	Տեխնիկական սպասարկում	
3.	տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետ	1
4.	վարորդ	1
5.	ԸՆԴԱՄԵՆԸ	5

ժ. հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության աջակցող բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	2
3.	ԸՆԴԱՄԵՆԸ	3

ժա. պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության աջակցող բաժին

N	Հաստիքի անվանումը	Միավորի թիվը
1.	պետ	1
2.	մասնագետ	2
	Տեխնիկական սպասարկում	
3.	տեղեկատվական տեխնոլոգիաների սպասարկման մասնագետ	1
4.	վարորդ	1
5.	հավաքարար	1
6.	ԸՆԴԱՄԵՆԸ	6

»:

8. Սույն հրամանն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, խորհրդականներին, մամուլի քարտուղարին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների պետերին:

Ա. ՊՈՂՈՍՅԱՆ